«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«12» սեպտեմբերի 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

Ն ԳԲԽ 31/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. Ն 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 29.08.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կենտրոն) 29.08.2014թ. ներկայացված բողոքով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ 29.08.1014թ. ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով սահմանվել է «Գեմցիտաբինի (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի՝ 1000մգ/100մլ, 100մլ ապակե սրվակ» դեղատեսակը, որով Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում գրանցված է ընդամենը մեկ արտադրող ընկերություն:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ խախտվել և չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

Հետևաբար, «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չեղյալ համարել:

2. ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.09.2014թ. N 01/10-193 գրությամբ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին ներկայացվող պահանջները:

Պատվիրատուն նշել է, որ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն և «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ինչ վերաբերում է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 29.08.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքին, ապա, ըստ Պատվիրատուի, այն կարելի է մեկնաբանել որպես Ընթացակարգով կազմակերպված գնումը տապալելու փորձ:

Պատվիրատուն միաժամանակ տեղեկացրել է, որ համաձայն Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 11.06.2014թ. կայացված որոշման՝ դեղափոշին և խտանյութը բոլորովին տարբեր դեղաձևեր են, սակայն ՀՀ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարծիքով ոչ մի տարբերություն չկա խտանյութի և փոշու միջև, քանի որ խտանյութն ու փոշին լրիվ համարժեք են: Այսպիսով, ս. թ. մայիս ամսից մինչ օրս ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի չարորակ ուռուցքներով հիվանդները չեն կարողանում ստանալ իրենց անհրաժեշտ բուժումը, քանի որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն երկրորդ անգամ փորձում է ձախողել այս գործընթացը և ամեն կերպ ձգտում է իր ունեցած դեղը վաճառել, որը 2,5 անգամ ավելի թանկ է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից տվյալ չափաբաժնի համար առաջարկվող գնից:

3. ԳԲԽ-31/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-31/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ուսումնասիրելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 29.08.2014թ. ներկայացված բողոքը, ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Կենտրոնին 03.09.2014թ. ներկայացված N 01/10-193 գրությունը, «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որը բաղկացած է եղել թվով 41 չափաբաժիններից:

Ընթացակարգի 1-ին չափաբաժնին (Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե ներարկման 1000 մգ/100մլ, 100մլ ապակե սրվակ) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն և «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն 29.08.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով սահմանված է եղել՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի՝ 1000մգ/100մլ, 100մլ ապակե սրվակ» ապրանքը: Նշված տեխնիկական բնութագրով Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում գրանցված է ընդամենը մեկ ընկերության արտադրության դեղ:

Բողոքաբերը նշել է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենք 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված իր մրցակցության իրավունքը և խնդրել է Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չեղյալ հայտարարել:

Պատվիրատուն ներկայացված բողոքի վերաբերյալ 03.09.2014թ. Կենտրոնին ուղղված N 01/10-193 գրությամբ հայտնել է, որ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Գնման ենթակա ապրանքի համար Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով սահմանվել է՝ դեղորայքի և պատվաստանյութերի անվանումը՝ գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ), բնութագիրը՝ խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի՝ 1000մգ/100մլ, 100մլ ապակե սրվակ, չափման միավորը՝ սրվակ, քանակը՝ 200:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից 04.04.2014թ. N 10-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստրի) աղյուսակի 723 համարի տակ գրանցված է «Գեմցիտաբին» անվանմամբ դեղը, դեղաձևը՝ խտանյութ ն/ե կաթիլաներարկման

լուծույթի, դեղաչափը և թողարկման ձևը՝ 1000մգ/100մլ, 100մլ ապակե սրվակ, արտադրողը՝ ԷԲԵՎԵ ֆարմա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով սահմանվում են «գնման առարկա» և «գնման առարկայի բնութագիր» հասկացությունները, մասնավորապես այդ կետերի համաձայն՝ գնման առարկան հանդիսանում է գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ գնման առարկայի բնութագիրը կազմում է գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

Օրենքի 12-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլ է տրվում ներմուծել, արտադրել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին նույն Որոշմամբ ներկայացվող պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «Մ.Է.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագիրը, 1-ին չափաբաժնի մասով,

կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, որտեղ ամբողջությամբ և հստակ նկարագրվել է ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը և հնարավոր մասնակիցների գնման գործընթացին մասնակցելու համար մրցակցության անհավասար պայմանները:

Բացի այդ, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից չներկայացվեց այն հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց, թե Հայաստանի Հանրապետությունում ընդամենը մեկ ընկերության արտադրության դեղ գրանցված լինելու փաստն ինչպես կարող էր «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի համար ստեղծեր մրցակցության անհավասար պայմաններ:

Այսպիսով, գտնում ենք, որ ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չեղյալ համարելու պահանջի վերաբերյալ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 29.08.2014թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-31/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան